Քաղաքացիական գործ թիվ ԵԴ/3997/02/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

28 փետրվարի 2023 թվական **քաղաք Երևան**

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը՝ նախագահությամբ դատավոր Հ. Ջալալյանի (այսուհետ նաև՝ Դատարան), քննության առնելով «ԼԵՈՊՈԼԴ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊ ընկերության ընդդեմ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, ՀՀ ֆինանսների նախարարության՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ 20.09.2022 թվականի հրամանն անվավեր ճանաչելու և «ԼԵՈՊՈԼԴ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով ընդգրկելու վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարության 05.11.2022 թվականի որոշումը վերացնելու պահանջների մասին հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը,

ՊԱՐԶԵՑ

26.01.2023 թվականին փոստային ծառայության միջոցով հայցվոր «ԼԵՈՊՈԼԴ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊ ընկերության ներկայացուցչի կողմից հայցադիմում է ներկայացվել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, ՀՀ ֆինանսների նախարարության՝ խնդրելով անվավեր ճանաչել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ 20.09.2022 թվականի հրամանը և վերացնել «ԼԵՈՊՈԼԴ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով ընդգրկելու վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարության 05.11.2022 թվականի որոշումը:

Դատարանի 08.02.2023 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:

Հայցվորի ներկայացուցիչը հայցադիմումը կրկին ներկայացրել է դատարան, որը դատարանում մուտքագրվել է 22.02.2023 թվականին, դատավորի աշխատակազմին հանձնվել՝ 23.02.2023 թվականին:

ՀԱՍՏԻԿ ՋԱԼԱԼՅԱՆ
ԴԱՏԱՎՈՐ

Դատարանն, ուսումնասիրելով կրկին ներկայացված հայցադիմումը, արձանագրում է, որ այն ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 120-122-րդ հոդվածներով սահմանված պահանջներին համապատասխան:

Հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան, հետևաբար, Դատարանը գտնում է, որ հայցադիմումը պետք է ընդունել վարույթ:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-125-րդ, 199-200-րդ, 234.6-րդ հոդվածներով՝ Դատարանը

ՈՐՈՇԵՑ

«ԼԵՈՊՈԼԴ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊ ընկերության հայցադիմումն ընդդեմ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, ՀՀ ֆինանսների նախարարության՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ 20.09.2022 թվականի հրամանն անվավեր ճանաչելու և «ԼԵՈՊՈԼԴ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով ընդգրկելու վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարության 05.11.2022 թվականի որոշումը վերացնելու պահանջների մասին, ընդունել վարույթ:

Հայցադիմումը դատարանում ներկայացված համարել այն սկզբնապես ներկայացնելու օրը՝ 26.01.2023 թվականը:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Հ.ՋԱԼԱԼՅԱՆ**